

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 226-Ա

30 հուլիսի, 2020 թվական

**ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 27-ի N 1125-Ա, N 1127-Ա, N 1128-Ա, N 1132-Ա, N 1134-Ա և N 1135-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի հուլիսի 29-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) ԱՁ «Նորիկ Գալստյան», Արմավիրի մարզ, գ.Արագափ (ՀՎՀՀ 49530267).
- 2) Ա/Ձ «Դավիթ Հարությունյան», Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, բնակավայր Ույծ (ՀՎՀՀ 79809254).
- 3) Ա/Ձ «Դանիել Դանիելյան», Արագածոտնի մարզ, գ.Արտաշավան (ՀՎՀՀ 54625466).
- 4) Ա/Ձ «Սասուն Խաչատրյան», Գեղարքունիքի մարզ, գ. Ծովազարդ (ՀՎՀՀ 74365278).
- 5) Ա/Ձ «Արամ Խաչատրյան», Տավուշի մարզ, գ. Զորական, 13/2 փ. (ՀՎՀՀ 71000999).
- 6) Ա/Ձ «Գարեգին Գրիգորյան», Տավուշի մարզ, գ. Զորական, փ. 11/2, (ՀՎՀՀ 71002016).
- 7) «ՍԵՎՆ» ՍՊԸ, ք. Երևան, Ազատության 2 ա (ՀՎՀՀ 00488053):

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 30/07/20 16:53:09 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ